ХИМНИ
Арт 1/151

Cl 2464

Арм 1/151

Preghiere suc-
cincte in Armen
Volg. Editione bel
i brani fini
1832



Государс
ордена Ленина
БИБЛИОТЕКА СССР
им. В. И. ЛЕНИНА

Иофа 7504-48



Арм 1/151

# ԿԱՐՃԱՌՕՏ
# ԱՂՕԹԱԳԻՐՔ
# ԱՄՄԷ՛Ն ՕՐՈՒԱՆ

Ծանօթ ու՛
հանգչեափ որփոխաղօթք ընելու

Սասամխօլ գրած

Ի Հ. ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴ.
ԱՒԳԵՐԵԱՆ

ՎԵՆԵՏԻԿ
Սբ Ղազարու վանքը
1832

Preußische Staatsbibliothek Berlin
ПОГАШЕНО

Авгерян, Мкртич

Краткий молитвенник на каждый день.

Венеция, 1832

V 1926. 128

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շատ կերպ սիրուն ու օգտակար աղօթքի գրքեր եղած են գրաբառ և աշխարհաբառ, որ ամենուն ձեռքը կան. այսու ամենայնիւ ջերմեռանդները աղաչեցին, որ աւելի համառօտ ու պարզ գրքուկմը ըլլայ՝ ամէն օրուան համար, որ կարե-

նայ մեկը վրան միշտ պա-
հել, և ուր որ ըլլայ նէ՝
բոլոր օրուան հարկաւոր
աղօթքները ընել։ Ասոնց
փափաքը լեցնելու համար
աս պզտիկ գործքը գրե-
ցինք ու տպեցինք. տ̅ր ինքն
ընդունի մեր աշխատանքն
ալ, բարեպաշտներուն ա-
ղօթքն ալ, որով մենք ալ
կրկին մասնակից կըլլանք
հոգևոր բարեաց յողոր-
մութէն աստուծոյ։

# ԱՌԱՒՕՏԵԱՆ

## ԱՂՕԹՔ

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն։

ՓԱՌՔ քեզ երկնաւոր Թագաւոր, երկնի և երկրի ստեղծօղ ու պահպանօղ, ամենասուրբ Երրորդութիւն՝ մի Աստուած և Տէր ամենակալ ամենակարօղ։

փառք քեզ տէր լոյս իմ և կեանք իմ, որ ոչինչէ իս ըրիր բանական կենդանի, որպէս զի քեզ ճանչնամ ու պաշտեմ․ և քրիստոնէական մը և ուղղափառ հաւատքի արժանի ըրիր, որ կաթողիկէ եկեղեցւոյ օրէնքով ու բարի գործքով քեզ փառաւորելով՝ յաւիտենական կենաց ժառանգ ըլլամ։ Այսչափ ատեն ալ տուիր ինծի, որ ըրած մեղքերս ապաշխարեմ, բարեգործութեն ու առաքինութեն հետեւիմ քու շնորքովդ, միշտ պատ-

բառս ըլլալով բարի մահ-
ուան և երկնից արքայութե՟ն:
Շնորհակալ եմ, որ աս
գիշերս ալ իս կենդանի
պահեցիր, և ողջառողջ
աս առաւօտս հասուցիր,
որ ելլամ 'ի փառս քո աշ-
խատիմ: Ուստի կաղաչեմ
որ փուշը չերթայ ինծի
ըրած բարերարութիդ ամ-
մէն կողմանէ. հապա հաս-
նի իր վերջի վախճանին,
որ ես դու մի միայն աղ-
բիւր ամենայն բարեաց՝
մեր սրտին լեցնօղ և հանդ-
չեցնօղը յաւիտեան:
Տուր ուրեմն, քու ո՞ր շը-

Նովքդ, որ աս օրս բոլոր առանց մեղաց անցնեմ, ամէն բանս ու գործքս 'ի փառս քո ընեմ, և քու նը կամքդ կատարեմ ըղ-գաստութ̃բ և արդարութ̃բ և ա̃ծպաշտութ̃բ, շիտակ սրտով, մաքուր մտքով, ճշմարիտ խօսքով, և ար-դար գործքով։ Քո́ եմ ես, և կեցո́ զիս, անպիտան ծառայ եմ, և անարժան որդի։ Քեզ բոլորովին կըյանձնեմ խս ալ, ամէն բանս ալ՝ որ քուկդ են բո-վանդակ, հոգիս, մար-մինս, միտքս, կամքս, ըղ-

գայարանքս. դուն իս կա-
ռավարէ՛ այս օրս ալ և բո-
լոր կենացս մէջն ալ. որ-
պէս զի քեզմով քեզ գամ
գտնամ, և յաւիտեան փա-
ռաւորեմ զՔ՟ հրեշտակնե-
րուն և ամմէն սուրբերուն
հետ, ամէն: Փառք Հօր և
որդւոյ և հոգւոյն սրբոյ,
այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից. ա-
մէն:

## Ներգործութիւն Հաւատոյ:

Խոստովանիմ և հաւա-
տամ, զի դու ես ա՟ծ իմ

և տ՟ր, Հայր և Որդի և Հոգի սուրբ, մի ա՟ծ, և երեք անձն. և մինդ 'ի ն՟ը երրորդութ՟ե՝ միածին որդի աստուծոյ մեզի համար եկար մարդ եղար 'ի ն՟ը ա՟ծածին կուսէն մարիամայ. և խաչիւ և մահուամբ և յարութ՟բ քով մեզ երկնաւոր հօրդ հետ հաշտեցուցիր, ու բաշխեցիր մեզի հոգւոյդ սրբոյ շնորհքը, որ կարենանք ճշմարիտ հաւատքով և բարի գործքով փրկութ՟ե հասնիլ, հիմա հոգւով, յարութ՟ե օրն ալ մարմնով:

Կըհաւատամ միամիտ սըր-
տով ինչ որ աւ յայտներ
ես աստուած իմ առաքե-
լոց, մարգարէից, և վար-
դապետաց բերնովը և գը-
րովը սուրբ կաթուղիկէ ե-
կեղեցւոյ. որուն հաւա-
տարիմ և հնազանդ որդի
իմ կըդաւանիմ: Դուն իս
պահէ՛ սա ո՞ր հաւատքիս
մէջ մինչև ՚ի մահ:

Յուսոյ:

Յոյս իմ ես դու տէր
ա͠ծ իմ. և անտարակոյս
գիտեմ, որ ինչ որ մեզի

խոստացար՛նէ՝ կուտաս ,
աղէին շնորհք , և անդէին
փառք անվախճան , թէ
որ մենք ալ քու խօսքդ
պահենք, ու հաւատարիմ
ծառայութին և որդիութէն
քեզի ընենք նէ ։ Իմ յոյս
չեմ դրեր իմ վրաս , և ոչ
ուրիշի վրայ ․ այլ բոլորո֊
վին կապաւինիմ քու ան֊
բաւ գթութեդ և մարդա֊
սիրութեդ ։ Միայն խընդ֊
րեմ , քու ձեռքդ իմ վրաս
ըլլայ , ու առաջնորդէ իմ
ակարութես , որ ինչ որ կը֊
յուսամնէ քեզնէ՝ քեզմով
և ՛ի քեզ , բարի գործքով

կարենամ ժառանգել յա-
ւիտեան :

## Սէրոյ :

Սէր իմ, ո՜ր իմ, ա՜ծ
իմ, մի միայն բարի և բա-
րերար · քեզ կըսիրեմ
ամենէն բանէն 'ի վեր, իմ
կեանքէս ու հոգիէս էւել·
ոչ երկիր և ոչ երկինք կըր-
նան իս քու սիրոյդ բաժ-
նել · ոչ հանգիստ՝ ոչ նե-
ղուէն, ոչ մեծուէն՝ ոչ աղ-
քատուէն, ոչ կեանք և ոչ
մահ կըրնան մէկ հատիկ
սիրականս իծմէ զատել :

Քեզ կըսիրեմ ծայրագոյն
սիրով, վասն զի ըստ ին-
քեան բարի ես և ամենա-
բարի և ամենայն բարի․
միանգամայն և բարերար․
ուստի չեմ կրնար մոռնալ
ինծի ըրած անբաւ բա-
րիքդ ։ Քու սիրոյդ հա-
մար եղբայրս ալ կըսիրեմ
որոնց ինծի չափ, և ի-
րեն բարիքը ինծի պէս կու-
զեմ․ ինծի չարիք ընողին
ալ բարիք ընես որ՝ կըխնդ-
րեմ ։ Միայն դու տուր
ինծի հաւատարիմ մնալ
միշտ 'ի սէր քո, և գալ
հասնիլ 'ի վայելումն սի-

րոյ քո յաւէտեանս յաւի-
տենից ․ ամէն ։

## Սուրբ Աստուածածնայ ։

Մարիամ կոյս՝ սրբու-
հի անարատ՝ մայր աստու-
ծոյ , և մայր մեր , երկնի
երկրի թագուհի ․ դուն
ես միայն յետ աստուծոյ
մեկ հատիկ մեր յոյս և
ապաւէն ․ մեծուեդ կեօ-
րէ գթասիրտ , գթութեդ
հետ առատ , առատութեդ
ալ ամենուն սիրօղ սիրե-
լի ։ Աղքատ եմ ես հոգ-
ւով քան մարմնով , քու

առատ ողորմութեանդ կարօտ. քու ձեռքդ է ամէն շը-նորհքին գանձը. դու ա-ւելի քան զիս գիտես իմ ողորմելունս. անոր կեօրէ ինծ ողորմէ՛. ոտքդ կինկ-նամ, կաղաչեմ կըպաղա-տիմ, դուն ինչպէս գի-տես նէ՝ հոգիս հոգա՛. և որչափ որ կըսխալիմ, դուն իս Ճամբուն բեր. որ ապա-հով հասնիմ իմ վախճա-նիս՝ զոր ած կուզէ, իրեն ծառայելով զինքը գտնալ ու վայլէլ յաւիտեան:

Պահապան հրեշտակին :

Իշխան փառաւոր՝ հը-
եշտակ աստուծոյ ամե-
նակալի, որ անոր հրա-
մանովը՝ ծնած օրէս ինչ-
ւան աս օրս խս կըպահես
ըպահպանես ամէն չա-
է, և անդադար 'ի բարին
ըյորդորես : Շնորհակալ
մ քու երախտեացդ, կա-
աչեմ չինայիս իմ ապե-
ախտութեանս ու անարգու-
թեանս. հապա գթաս ու-
րմիս, ինչպէս մէնծը
ղորկին պահուէ կընե-

րէ աչք կրխփէ ։ Զեռքէ
բռներ՝ իս աղքայուն Ճա
բան կուզես տանիլ․ ես ո
կրխոստովանիմ, մի՛ թողու
իս իմ խեղքիս, դարձի
չխտակ Ճամբան՝ խրատե
լով ու չեխելով։ Բարե
խօս եղիր աստուծոյ առջի
քու անարժան ծառիդ. Հ
մար, որ Ճերմակերես եղ
լամ իր առջև, և քեզ ա
փառք ու պատիւ ըլլայ ի
փրկուիս յաւիտեան ։

## ՊԱՏԱՐԱԳԻ

## ԱՂՕԹՔ

ՓԱՌՔ պատիւ եւ երկրպագութիւն 'ի բարձունս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ՝ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Գոհանամ զքէն Տէր, որ ես անարժանս արժանի ըրիր քու առջեւդ գալ,

քու մեծուե՟դ հետ խօսիլ,
իմ յարգութ՟իս ընել, և
մասնակից ըլլալ արդեանց
փրկչիս՝ սուրբ պատարա_
գը տեսնալով ու լսելով ։
Աս խորհուրդիս մէջ երկ_
նաւոր Հօրդ գութը և ո_
ղորմութ՟իը պայծառ կե_
րևնայ, որ մեր փրկու_
թեանը համար և մեր սի_
րուն՝ քու ա՟ծորդիդ մա_
նեցիր 'ի չարչարանս և 'ի
մահ ։ Որդւոյդ միածնի
սէրը կըյայտնուի, որ յօ_
ժարու՟ք անձդ տուիր՝ չէ
թէ միայն մեռնիլ խաչի
վրայ, հապա սուրբ մար_

մի՛նդ՝ սուրբ արիւնդ ալ մեզի համար զոհ ընելով քեզ մեզի բաշխել ուզեցիր ամմէն օր՝ հաց կենաց և բաժակ անմահութե՛ն ։ Հոգւոյդ սրբոյ քաղցրութի՛նը ու մարդասիրութի՛նը կըտեսնուի, որ բովանդակ եկեղեցւոյ և իւրաքանչիւր հաւատացելոց շնորհքիդ աղբիւրը կըբանաս քո՛ւ արդիւնքովը, ու հոգևոր հարստութենովդ մեզ կըփարթամացնես․ երկրէ երկինք մեր սիրտը կըվերցընես, ու ժամանակաւոր կեանքով յաւիտենականն

փոխուելու ։ Այսր հա
մար կարգաւորեցիր որ ն
եկեղեցիդ մեր սիրտը միտ
քը բանայ պատարագին
աւջի բաներովը , մարդա
րէական և առաքելական
կարդացմունքովը , սուրբ
աւետարանին խօսքերովը ,
և հանգանակին հաւատոյ
դաւանութը̄ը · որպէս զի
հասկընանք , թէ ինչպէս
մեծ բան է աս սուրբ խոր-
հուրդը՝ որ հիմա պիտի
կատարուի 'ի յիշատակ
խորհրդոյ վերնատան և
խաչի և 'ի փրկուն մեր ։
Ուստի կաղաչեմ տ̄ր իմ ,

սոր մաքրես ու պատրաստես իմ միտքս ալ սիրտս ալ, որ չըլլայ թէ անարժանութք ներկայ ըլլամ ահաւոր և մեղսաքաւիչ պատարագիս, հապա քու շնորհքովդ արժանի ըլլամ մասնակից ըլլալու ամմէն բարեաց սուրբ խորհրդոյս:

## Զղջում:

Ասոր համար նախ և առաջ կըզղջամ բոլոր սըրտանց իմ ամմէն մեղքերուս վրայ, որ հաշտ ըլլամ իմ ստեղծողիս հետ. կը-

ցաւիմ՝ սատուգապէս որ
շատ անգամ՝ քու անուշ
խաթըրիդ դպեր եմ, քեզ
արդողցուցեր եմ, յոխս ա-
րիւնը ոտքի տակ առեր
եմ, ամմէն կերպով ապե-
րախտ եմ գտուեր ա͞ծ-
ային երախտեաց : Մեղայ
տ͞ր մեղայ , և զանօրէնու-
թիւն իմ՝ ես ինձէն գիտեմ,
ամենակալ տ͞ր թո՛ղ զմեղս
իմ, ինչպէս մանասէին ,
Ա͞ծ քաւեա՛ զիս զմեղա-
ւորս , ինչպէս մաքսաւո-
րը : Հա՛յր մեղայ յերկինս
և առաջի քո , գոչեմ ա-
նառակ որդիին հետ : Ցև

չեմ զնա տր̃, կործանմ գայ-
ցես արքայութ̃ քոյ, կպա-
ղատիմ աջակողմեան ա-
ւազակին պէս: Որ ստեղ-
ծերդ զնա, ողորմեա ինձ,
կողկողիմ սայասայ պոռն-
կին պէս: Մագդաղենա-
ցին կատարեալ դարձը
տուր ինձ: Սօղոսս Պօղոսի
նման տուր ըրէ: Պետրո-
սի արցունքովը իս սրբէ՛:
Լուսաւորչայ չարչարան-
քովը, և ամենայն սրբ̃ց
ճգնութենովը ազատէ՛ զիս
իմ մեղքերէս. մանաւանդ
սուրբ պատարագիս ար-
դիւնքովը փոխէ՛ զիս ՚ի մե-

ղաւորէ յարդար, քարեղէն սիրտս 'ի մարմնեղէն, հին մարդս 'ի նոր մարդ, անսուրբս 'ի սուրբ։

## Առաջադրութիւն։

Երկրորդ՝ կառաջադրեմ քու շնորհքովդ ասկից եւս անձս առնել մեռնիլ քան թէ մէյմալ քեզ մեղքով վշտացնել. արուն թափել մարտիրոսի պէս՝ քան թէ ուրանալ իմ պարտքս ճշմարտութեան։ Դու գիտես տէր

ստեղծօղ սրտիս, որ կու-
զեմ կփափաքիմ քեզ ծա-
ռայել, քեզ պաշտել, քեզ
սիրել՝ի բոլոր սրտէ. բայց
իմ տկարութ̃ս, ու չարութ̃ս
հեռաւօղ կըլլամ մարմնոյ
քան հոգւոյ, աշխրքի քան
երկնքի, սատանայի քան
աստուծոյ ։ Ուստի կաղա-
չեմ, դու ամենակարօղ՝
ամենիմաստ և ամենաբա-
րի տ̃ր իմ, իմ տկարունս
զօրացո՛, իմ տգիտութնս
սրբեցո՛, իմ չարութնս
վերցո՛. մարմինս հոգւոյս
հնազանդեցո՛, աշխրքի չար
օրինակներէն հեռացո՛, սա-

տանջալին փորձութիւններէն ապրեցո՛ւ։ Ես ինծմով չեմ կրնար խոտորիլ 'ի չարէ, և առնել զբարի. բայց քեզմով ամէն բանի կարող կըլլամ, որ զօրութիւն իմ, որ հաստատիչ իմ, որ ապաւէն իմ, և փրկիչ իմ։

Ողջո՛յն տալէն ետքէնը։

Տէր քու սիրուդ համար սիրով կհաշտուիմ ամէնուն հետ, որ դուն ալ ինծի հետ հաշտ ըլլաս մարդասէր. ամէն թշնամեացս կըներեմ, ինչպէս

դուն ալ միշտ ինծ կըրնե-
րես ներողամիտ Տ̄ր · որ-
պէս զի կարենամ հա-
մարձակ աղօթել, թո՛ղ
մեզ զպարտիս մեր, որ-
պէս և մեք թողումք մե-
րոց պարտապանաց :

### Սուրբ Սուրբին :

Ա՛խ Տ̄ր, սխալ ըլլայ, երբ սխալ ըլլայ, որ ես մեղաւորս ալ սուրբ ըլլամ, ՚ի մարդկանէ հրեշտակ դառնամ, ու գամ երկինքը բոլոր սուրբերու հետ՝ հրեշտակներու հետ միա-

տեղ քեզ երգել երեքսրբ-
բեան օրհներգութիւնը՝ լիա-
սիրտ լիաբերան յաւի-
տեան, ու ծարաւած սիրտս
զովացնել քու անբաւ կա-
րօտովդ, ա̃ծ սրտի իմոյ,
բաժին իմ ա̃ծ յաւիտեան.
բաժին իմ ես դու տ̃ր.
ծարաւի է անձն իմ առ քեզ
ա̃ծ, երբ եկից երեւեցայց
երեսացդ աստուծոյ. յա-
գեցայց յերեւիլ փառաց
քոց, ո՛վ փառաւորեալդ
յա̃մ արարածոց. քեզ
փառք յաւիտեանս ։

## Ա~է+ Ֆէրէ+րն:

Ճշմարտապէս խոստովանիմ և հաւատամ, և հաւատով երկրպագանեմ, զի դու ես քն գառն աստուծոյ՝ որ բառնաս ըզմեղս աշխարհի: Դու նոյն ես՝ որ վերնատունը քեզ տուիր մեզ կերակուր՝ հացին ու գինիին տեսքովը • հիմա ալ զնոյն խորհուրդ կատարեցիր քահանային բերնովը, որ քու դիմացէդ ըսաց, այս է մարմին իմ, այս է արիւն իմ: Դու

նոյն եմ՝ որ խաչին վրայ նոյն պատարագը մատուցի՛ր, որ հաշտեցնես զՀայր ը̅ արարածս. և նոյն պատարագը քահանան քու կողմանէդ մատուցանելով կհաշտեցնէ մեղաւորները ամէն օր։

Հա՛յր երկնաւոր ընդունէ՛ քու միածնիդ հետ մեր սրտին պատարագն ալ, և մեզ ճանչցի՛ր որպէս եղբարս Յ̃ի անդրանիկ մեր եղբօրը. որ ինչպէս ինքն է բնութ̃ հարազատ որդի, մենք ալ շնորհքով քու որդիքդ ըլլանք, և չբաժնը-

ւինք քեզմէ ու իրմէն յաւիտեան ։

Եւ դու Հոգիդ սուրբ աստուծոյ, որ աղաւնիի տեսքով երեւցար Քսի վրայ 'ի յորդանան, ու հիմա ալ ինջար աներեւոյթ կերպով իր մարմնոյ եւ արեան խորհրդոյ վրայ, էկուր աղաչեմ մեր վրայ ալ հանգչէ հեզիկ աղաւնիի պէս. ու սրբելով զհոգի եւ զմարմին մեր՝ ըրէ արժանաւոր բնակարան սուրբ երրորդութեան հօր եւ որդւոյ եւ հոգւոյդ սրբոյ, ամէն ։

Ընդ որս և մեզին ։

Ո՛վ ամենասուրբ Երրորդութիւն, որ ընտրեցեր զամենայն սուրբս քո, և ամենուն Թագուհի ըրեր զամենասուրբ կոյս Մարիամ Աստուածածինն, անոնց անուանը ու արդեանցը յիշատակովը սուրբ սեղանիս առջևը, մանաւանդ զօրութ՟ նոյն սուրբ պատարագիս սուրբ ըրէ իս ալ, և բոլոր սուրբ եկեղեցւոյ որդիքը․ կենդանիքը պահէ քու շնորհացդ մէջ,

և մեր ննջեցելոց հանգիստ
շնորհէ արքայութեան · ողոր-
մեա՛ մեր ծնողաց և ազգա-
կանաց հոգիներուն , և
ամենայն հաւատացելոց
ծանօթից և անծանօթից։
Ողորմէ՛ ողորմէ՛ հոգւով
մեռած կենդանիներուն՝
անզեղջ մեղաւորներու ,
դարձ տուր ամենայն մո-
լորելոց · որովհետև ամ-
մենքն ալ քու ձառքիդ
ստեղծածն են, և գին ան-
գին արեան անարատ գա-
ռինն աստուծոյ , որ 'ի
վերայ սրբոյ սեղանոյս ։

Հայր մէրը, ու մայն մէր մապէ՛ղըուէ :'Ի մէ 'ի մէջն խօսքէրը մե՛զ ալ, երկըր-պագէ՛, ու ըսէ՛ :

Սրտովս երկրպագելով՝ փափաքով կըպագնեմ յո՜ փրկիչ իմ քու ո՜ր հինգ վէրքերդ, ուսկից որ բխեց ինծ կենաց աղբիւրը, փըր-կուէ յոյսը, Ճշմարտուէ լոյսը, ազատութէ գինը, ներողութէ առատուեը, մարդասիրուէ գութը, և ամէն բարիքներուն գան-ծը : Ո՛վ խաչելեալ սէր

իմ, որ իմ. աս ինչ շը-
նորհք էր՝ որ ինծի ըրիր.
իմ վրաս կեանքդ դրիր,
որ ես յաւիտենական մա-
հուանէ խալըսիմ. ինծի
համար չարչարուեցար,
որ ես հոգւոյս հանգչիմ.
ինծի համար մեռար, որ
ես կենդանանամ. ինծի
հոգեւոր կերակուր եղար,
որ ես ապրիմ հոգւով, և
սուրբ մարմինդ Ճաշակե-
լով՝ իրաւունք ունենամ
յարութեն փառաւորեալ
մարմնով։ Մէր անունյ՛
սիրով քով Ճմլեա սիրտ
իմ քարեղէն։ Տենչալի

տեսլեամբդ տուր ինձ յագենալ որ յո՛ քո՛ ։ Ցօղ արեան քո որ ցօղեա՛ 'ի հոգիս, ցնծացէ անձն իմ ։

Գոհանամք զկէն Տէրին ։

Գոհունի քեզ անբաւ՝ Հայր երկնաւոր, որ միածնիդ պատարագաւ ընդունեցիր մեր հաշտութիւնը ու փրկութիւնը համար ։ Կաղաչեմ, մի՛ զրկեր իս ալ 'ի մասնակցութէ սուրբ խորհրդոյս . Թէեւ արժանի չըլլամ նէ սրբութի առնալ՝ գոնէ փափաքով

մասնակից ըլլամ՛ հոգևոր հաղորդութե̄ն ։ Գոհութ̄ն քեզ անչափ՝ Քս̄ Թագաւոր, որ իս արժանի ըրիր ներկայ գտնուելու ս̄բ պատարագիդ ։ Կաղաչեմ, մասնակից իս ըրէ՛ փշրանքի սուրբ սեղանոյդ՝ որ 'ի վերնատան, և կաթուածոյ սուրբ արեանդ՝ որ 'ի գողգոթա. որուն մի միայն կաթիլը իս կրնայ բժշկել ամէն հոգևոր հիւանդութէս, քաւել իմ բոլոր մեղքերս, ու ս̄բ ընել և միացնել զիս ընդ սրբուեդ սրբոց ։

քեզ փառաւորե՛նք այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտե՛նից, ամէ՛ն:

# ԻՐԻԿՈՒԱՆ

## ԱՂՕԹ·Ք

ՀՈԳՒՈՎ և ճշմարտութ̅ քեզ երկրպագելով, և սրտիւ ծնրադրութ̅ե ընելով գոհանամ զքէն տ̅ր ա̅ծ իմ, որ սա օրս ալ ինծ պարգևեցիր ողջ առողջ անցնել, ու իրի-

կուռը հանիլ․ որ ցորե-
կուան աշխատանքէն ետե-
գիշերը հանգչիմ, որով
կարենամ նորանց աշխա-
տիլ՝ ի փառս քո և յօգուտ
հոգւոյս, կրկին կրկին շը-
նորհակալեմ քու անքա-
սիրոյդ, որ բիւր կերպով
բարիք ինծ ըրած ես ին-
չուան հիմա հոգւոյս ու
մարմնոյս, և այսու ա-
մենայնիւ միշտ կըներես
իմ պակասութիւններուս, կը-
համբերես իմ ապերախ-
տութեանս, կըսպասես դար-
ձիս ու ապաշխարութեանս։
Դու որ գթած՝ երկայ-

նամիտ և բազումողորմ,
լոյս և շնորհք տուր ինծի,
որ երիկուան մթուն միտքս
բացուի, ու ճանչնամ ամ-
մէն սխալմունքս, ու իս
շտկեմ. ինչպէս աղէկ գի-
տեմ՝ որ աս բոլոր օրս ալ
շատ անգամ սխալեցայ
մտքով. խօսքով. ու գործ-
քով: Կըցաւիմ ճշմարիտ
սրտանց, որ ինչպէս որ
պէտք էր՝ անանկ քեզ չը-
սիրեցի. որով եղբայրնե-
րուն ալ շատ պակսեցայ.
աւելի անձնասիրութ̃՝ հը-
պարտութենով, նախան-
ձով, ու բարկութենով

շարժեցայ ․ ( մանաւանդ
ատ ան յանցանքին տէրը
եղայ ատ օրս ․․․) մեղայ մե-
ղայ , փիւշման եմ ։ Ողոր-
մեա՛ ինձ ա̃ծ ըստ մեծի
ողորմութե̃ քում , ըստ բա-
զում գթութե̃ քում քա-
ւեա՛ զանօրէնութ̃իս իմ ։
Ցօղեա՛ յիս մշտկաւ , և
սր̃ եղէց , լուա՛ և քան ըզ-
ձիւն սպիտակ եղէց ։ Սիրտ
սր̃ հաստատեա՛ յիս ա̃ծ , և
զհոգի ուղիղ նորոգեա՛ 'ի
փորի իմում ։ Նորոգող
հնուե̃ց նորոգեա՛ և զիս ,
նորոգ զարդարեա՛ ։ 'ի ձեռս
քո յանձն առնեմ զհոգի

իմ. քեզ փա՛ռք Թագա-
ւոր իմ և Ա͞ծ իմ:

Զերեկոյի զաղօթս մեր
ընկա՛լ Տ͞ր բարեխօսութ͞ե
ծննդի քո, և ամենայն
սրբոց. և առաքեա՛ 'ի մեզ
Տ͞ր զօգնու͞ն յերկնից յա-
թոռոյ սրբու͞ե քո:

Ընկա՛լ քաղցրութ͞ե՝ Տ͞ր
Ա͞ծ Հզօր, զդառնացողիս
զաղաչանս: Մատի՛ր գը-
թութ͞ե՝ առ պատկառեալս
դիմօք: Փարատեա՛ ամե-
նապարգև՝ զամօթական
տխրու͞թս: Բա՛րձ յինէն
ողորմած՝ զանբերելի ծան-
րու͞թս: Անջրպետեա՛ հնա-

բաւոր՝ զմահացու կրթու-
թնս : Աւարեմ միշտ յաղ-
թօղ զխաբողին հաճունս.
Բացագրեմ վերնային՝ ըղ-
մոլեկոյն մտաւախուղ : Կըն-
քեմ կեցուցիչ՝ զկորու-
չին ընթացմունս : Ցրուեմ
ծածկաւս՝ զըմբռնողին
չար գտմունս : Խորտա-
տակեմ անքնին՝ զմար-
տողին դիմեցմունս : Տնա-
գրեմ քո անուամբդ՝ ըղ-
լուանցոյց երդ յարկիս :
Պարփակեմ քո ձեռամբդ՝
զաւատաւոր տաճարիս :
Գծագրեմ քո արեամբդ՝
զմուտ սեմոց սենեկիս :

Կերպացո՛ զքո նշանդ՝ 'ի
հետս ելից մաղթողիս :
Ամրացո՛ քո աջովդ՝ զհան-
գըստեանս խշտի : Մաք-
րեցե՛ս 'ի հաղբից զծած-
կարան անկողնոյս : Պա-
հեսցե՛ս քո կամօքդ՝ զտա-
ռապեալ անձն ոգւոյս :
Անխարդախ արասցես՝ ըզ-
քո շնորհեալ շունչ մարմ-
նոյս : Կացուսցե՛ս շըջա-
փակ՝ զպար զօրուդ երկ-
նայնոյ : Կարգեսցե՛ս 'ի
դիմի՝ ընդ դէմ դիւացն
դասու : Յա՛ւր հանգիստ
բերկրութեան մահահանգոյնս
նիրհման 'ի խորութեան գիշե-

րիս , բարեխօսութեամբ հայ-
ցուածոյ սրբոյ ածած-
նին՝ և ամենայն ընտրե-
լոց ։ Ամփոփեալ պարու-
րեամ զպատուհան տեսու-
թեանց՝ զգայարանացս իմա-
տից , անզարհուրելի զե-
տեղմամբ՝ 'ի ծփական խռ-
ովութեանց , կենցաղական
զբաղմանց , անրջական ե-
րազոց . խօլականաց ցնո-
րից , յէշատակաց քոյ յու-
սոյդ՝ անմխատելի պաշտ-
պանեալ ։ Եւ սթափեալ
վերստին 'ի ննջմանէ ծան-
րութենէ՝ ամենազգաստ արթ-
նութեամբ , հոգենորոգ զուար-

թուլթ͞ք՚ի քեզ արժանա-
ցեալ, զայս ձայն մաղթա-
նաց բուրմամբ հաւատոյ
քեզ ամենօրհնեալ Թա-
գաւոր փառաց անճառից՝
փառաբանողաց երկնա-
գունդ խմբից երգակ-
ցեալ յերկինս առաքել:
Զի դու փառաւորեալ ես
յամենայն արարածոց յա-
ւիտենից. ամէն:

Ընկալնիք առաջի քո
ա͞ծածին, եւ աղաչեմք զա-
նարատ զկոյսդ. բարեխօ-
սեա՛ վասն անձանց մե-
րոց, եւ աղաչեա՛ զմիածին
որդիդ. փրկել զմեզ՚ի փոր-

ձուէ՛ և յամենայն վտան-
գից մերոց: Առ քեզ ա-
պաւինիմք ամենասրբու-
հի, գերագոյն և հրաշա-
լի, և բաշխօղ բարուեց,
աղբիւր ես ծարաւեաց, և
հանգիստ աշխատելոց. և
եղեր վերընկալ ա̃ծային
բանին:

Մայր սուրբ սքանչելի
լուսոյն, որ զա̃ծն ամե-
նայն յաւիտենից յորո-
վայնի քում կրեցեր. և
ցնծութ̃ի աշխարհի ծնար
զբանն ա̃ծ. աղաչեմք:
Մա՛յր սուրբ բարեխօսեա՛:

Աղաչեմ վասն մեր զաւ-

'ի քէն զմարմնացեալն ա՟ծ.
որ խոնարհեցաւ 'ի հայրա-
կան ծոցոյ, եւ մարմին
ըստ մարդկային բնութեամ՝
առնել խաղաղութ՟ի յեր-
կինս և յերկրի. աղա:

Աղաչեմ: Ներել մեզ
անտես առնել զյանցանս
մեր. և տալ օգնականութ՟ի
ընդդիմակաց լինել հա-
կառակամարտից 'ի պա-
տերազմի. աղա:

Աղաչեմ: Զի լռեսցեն
պատերազմունք. դադա-
րեսցին յարձակմունք թշ-
նամեաց. անկեսցի սէր և
արդարութ՟ի 'ի յերկրի. աղա:

Աղաչեմ ։ Աճեցուցա-
նել յերկրի մերում ընդ-
քաղցր բղխումն աղբերաց.
ջրաւոր պտղաբերութիւն
բուսոց և տնկոց՝ առ՚ի զու-
արճալի լինել մեզ հարկա-
ւոր պիտոյից մերոց. աղա։

Աղաչեմ ։ Զի միաբա-
նեսցէ զեկեղեցի իւր ս̃բ ,
շինեալ ՚ի վերայ հիման
առաքելոց և մարգարէից.
պահել անարատ մինչև
յօր երևելոյ գալստեան
իւրոյ . աղա ։

Աղաչեմ զո̃ մեր սրբու-
հի զմիածին քո զորդին ,
և վասն հոգւոյն հանգու-

ցելոց՝ ընդունել յարքա֊
յութիւն երկնից, և տալ
մասն և բաժին ընդ նոսա
ամենայն. աղա:

Յիշեա՛ տ̅ր և ողորմեա՛:

Եւ ևս աղաչել զյոր֊
դորումն սիրոյ և զգործս
բարեաց պարգևել մեզ
խնդրեմք:

Տո՛ւր մեզ տ̅ր ա̅ծ մեր:

Զանձինս մեր և զմի֊
մեանս տ̅ն ա̅յ ամենակա֊
լին յանձն արասցուք:

Քեզ տ̅ն̅դ յանձն եղի֊
ցուք:

Ողորմեա՛ց մեզ տէր ա̅ծ
մեր ըստ մեծի ողորմուէ

քում. ասասցուք ա̃մքեան միաբանուք̃ ։

Տր̃ ողորմեա՛, Տր̃ ողորմեա՛. մայր Տն̃ բարեխօսեա՛ առ Տր̃ վասն մեր ։

Սուրբ Յովսէփ ա̃ծահայր, որ յ̃խս հայր կոչուեցար, կոյս փեսայ ամենասուրբ կոյս ա̃ծածնի, ինձ ալ հայրուն ըրէ՛ կաղաչեմ, բոլոր կենացս մէջ ինչուան 'ի մահ. և ինչպէս որ քեզի պէս երջանիկ մահ ունեցող չէ եղած, որ գլխուդ քովը կեցեր էին Յս̃ և Մարիամ, ինձ ալ դուն հասիր մահուանս

տանէնը. և առ սրտովհե-մակութենէ իս քեզ կըյանձ-նեմ, որ հոգիս քու ձեռ-քովդ յանձնես Յ՟ի և Մա-րիամու ձեռքը:

Ով Յովհաննէս Մկըր-տիչ, սուրբ Ստեփաննոս նախավկայ, սուրբ առա-քեալք և մարգարէք, մարտիրոսք, ճգնաւորք, կուսանք, հայրապետք, վարդապետք, և ամենայն դասք որոց բարեխօս է-ղէք ս աստուծոյ առջև իմ-ծի համար այժմ և ՚ի ժա-մու մահուանս. ամէն:

Ինն դասք սուրբ հրեշ-

տակաց , հազարք հազա-
րաց և բիւրք բիւրուց , որ
կայք առաջի աթոռոյն ,
մեզ համար աղաչեցէք որ
ճշմարիտ ա̃ծ պաշտութ̃ե
ս անցաւոր կեանքս ան-
ցնելով՝ գանք յերկինս
ձեզ հետ յաւիտեան փա-
ռաւորենք սուրբ երրոր-
դութ̃ին :

Հոգւոցն հանգուցելոց
ք̃ս ա̃ծ արա՛ հանգիստ և
ողորմութ̃ի · ողորմած տ̃ր
ողորմեա՛ հոգւոցն մեր նն-
ջեցելոց , և հանգո՛ զնոսա
յարքայութ̃ե քում , ուր
ժողովքն են սրբոց 'ի խա-

զաղուէ հոգւով հեզութե̅ն
յերկնից բարութեան։

'Ի խորոց կարդացի առ-
քեզ Տ̅ր Տ̅ր՝ լուր ձայնի
իմում։

Եղիցին ականջք քո 'ի
լսել ձայն աղօթից իմոց։

Թէ զանօրէնութիւնս իմ
քննես Տ̅ր, Տ̅ր ո՛ կարէ
կալ առաջի քո, զի 'ի
քէն է քաւութ̅ի։

Վասն անուան քո համ-
բերի Տ̅ր. համբեր անձն
իմ բանի քում, յուսա-
ցաւ անձն իմ 'ի Տ̅ր։

'Ի պահէ առաւօտու
մինչև յերեկոյ, 'ի պահէ ա-

ռաւօտու յուսացաւ իէլ 'ի տր:

'Ի տնէ է ողորմութիւն բազում, և 'ի նմանէ է փրկութիւն. և նա փրկեաց զիէլ յամ նեղուեց նր:

Տաւաներգիր Հայր մեր, փառ-աներգիր Ողջոյն քեզ ամ-ձեն գիփաւորութեան ձեզը գնելով աստնի իերգով մը:

1. 2. 3. Մի՛ երրորդութիւն, որ աշխարհիս խաղաղութիւն տայ, եկեղեցւոյ հաստատութիւն, մեր ազգին պայծառութիւն, բարեխօսութե մը ծծածնի, որբոյն պետոր-

սի, և սրբոյն գրիգորի լու-
սաւորչի ։

4. Ամենայն սրբոց, ի-
րենց յանձնելով մեզ ու-
մեր ընտանիքը, որ սուրբ
ըլլանք. և վասն առող-
ջութեն հիւանդաց, մխի-
թարութեն աղքատաց, և
վշտացելոց, յաջողութեն ճա-
նապարհորդաց, և օգնութեն
ամենայն անօգնականաց ։

5. Հինգ վէրաց Յսի,
ծնողաց և ազգականաց
հոգւոյն ։

6. Համօրէն ննջեցելոց
հոգւոյն համար ։

7. Եօթն ցաւոց սուրբ

ծածանի՝ անդեղջ մեղաւորաց դարձի համար ։

8. Սուրբ անտոն աբբայի՝ կրակէ պահելու համար, որ յակոբայ մծբնայ հայրապետի, ու սբ՟յն հաւքոսի՝ ժանտամահէն պահելու. ոբ՟ գրիգորի նարեկացւոյ, սուրբ ոսկեբերանի, սուրբ անտոնի պատուացւոյ՝ ամէն փորձանքէ խալըսելու ։

9. Ինը դաս հրեշտակներու, որ պահեն պահպանեն մեզ ամէն չարէ, ու յորդորեն առաջ տանին մեզ յամենայն բարի ։

10. Միքայէլ և Գաբ-րիէլ հրեշտակապետաց, և յովսէփայ ա̃ծահօր, որ իրենց բարեխօսութ̃բը տա-նը պատուիրանքն ալ ա-ղէկ պահենք, ու պարզե-րես աւանդենք մեր հո-գին իրենց ձեռքը։

11. Պաշտպան և ա-նուանակից սրբոյն, որ իրենց վարքին հետևելով իրենց քովը համնինք եր-կինքը։

12. Երկոտասան առա-քելոց, որ իբրև բարեկամք ք̃ի հաշտեցնեն մեզ ա̃յ հետ. և մեզի ջատագով

ըլլան մահուան օրը, ու վերջին դատաստանին ։

Փառք քեզ Տ̄ր ա̄ծ մեր, որ պարգեւեցեր զօրս բարեաւ և խաղաղութ̄ անցուցանել։ Մարդասէր ա̄ծ՝ զառաջակայ գիշերս՝ որ 'ի վր̄ մեր գալոց է, 'ի մեղաց փրկեա՛, 'ի չարեաց ազատեա՛, 'ի գործս բարիս առաջնորդեա՛։ Առաւօտու օրհնութե̃ցն և փառաբանութե̃ցն արժանի՛ արա զմ̄ հաւատացեալս անուանդ քում սրբոյ, և պահեա՛ 'ի խաղաղութե̃ ։

Տ̄ր ա̄ծ մեր՝ տուր զքո

խաղաղունդ ամ աշխար-
հի ․ բարձ զպատուհասս և ըղ-
պատուհասն 'ի յարբա-
ծոյ ։ Ողորմեա հարց և
եղբարց մերոց՝ կենդա-
նեաց և հանգուցելոց ։
Ողորմեա զեկեղեցի շինո-
ղաց, երախտաւորաց, պըտ-
ղատուից , սպասաւորաց ,
և այնոցիկ՝ որք ընդ հովա-
նեաւ սուրբ տաճարիս են
հանգուցեալ ։

Տր ած՝ օգնեա թագա-
ւորաց քրիստոնէից , և իշ-
խանաց բարեպաշտից, զօ-
րաց և զաւակաց նոցին՝
պահելով 'ի խաղաղուե ։

Տր̃ ա̃ծ մեր՝ պահեա՛ զաւ-
առաջնորդս և զեղբայրու-
թիւնս մեր ամբողջ և ան-
խռով 'ի կամս ողորմուե̃
քոյ։

Նշանաւ սբ̃ և պատուա-
կան խաչիւ քո հալածեա՛
զերևելի և զաներևոյթ
թշնամին 'ի սահմանաց մե-
րոց և 'ի բնակուէ̃ս մերմէ։
Փրկեա՛ զմեզ 'ի հրոյն յա-
ւիտենից։ Եւ քեզ փառք
յաւիտեանս․ ամէն։

# ԿԵՐՊ ԿԵՐՊ ԱՂՕԹՔ

որ ատէն կուզէս նէ
ընելու ։

---

Աղէկ աղօթք ընելու շնորհք
խնդրէլ։

ԿԱՄԱՉԵՄ որ առ-
ջեւդ երեւնամ, որովհետեւ
դիմացդ կըլլամ նէ՝ հրա-
մանոցդ հետ խօսելու, իմ
աղօթք ընելու ճամբան
չեմ գիտեր․ խելքս ալ
կըտատարտղնի, միտքս կցնդի․
մարմինովս ժամուն մէջն եմ,

կի՛ պատկերքիմը առջև
նստեր եմ. հոգւովս չեմ
գիտեր ուր եմ։ Ուստի կա
ղաչեմ, աղօթքի շնորհք
ինծի տուր, որ գիտնամ
որու առջև կայներ եմ,
ում հետ կխօսիմ, ինչ
կուզեմ։ Թագաւորին Թա
գաւորաց առջևը եկած
եմ, որ խեղճ աղքատիմը
պէս ողորմութիւն մուրամ.
ծանր հիւանդի պէս տէր-
տիս տէրման փնտռեմ
երկնաւոր բժշկէդ. ամէն
խնդիրքս համարձակ ու-
զեմ իմ սիրական հօրմէս.
մեղքերուս թողութի, ու

նոր նոր շնորհքներ առ-
նեմ. ըրած աղէկութիւննե-
րուդ շնորհակալ ըլլամ,
որ նորանց ամմէն իժիր
ամմէն կերպ բարիքդ տես-
նալու յոյս ունենամ: Ու-
րեմն դուն ինծ ողորմէ,
աղէկ աղօթք ընելու ներ-
մէն տուն տուր ինծի.
հեռացուր ամմէն սատա-
նային փորձութիւնները, որ
կուզէ միշտ աղօթքիս առ-
ջեւը ըլլալ, գիտնալով որ
ամմէն բարիք աղօթքէն
կըլլայ մեզի, ու աղօթքն
է արքայութեան բալլիք:
Միանգամայն իմ ամմէն

գործքս 'ի փառս քո ըլլայ ,
որով ամմէն ատեն աղօթք
ընել կըսեպուի • որպէս զի
կարենամ քու հրամանքդ
կատարել, թէ պարտ է
յամ ժամ յաղօթս կալ,
և մի՛ ձանձրանալ։

Աստուծոյ յանձնելու մեզ ալ՝
ուրիշներն ալ։

Տր̄ ա̄ծ իմ, գիտեմ որ
շատ անգամ սխալեր եմ
իմ խելքիս կառավարու-
թեանը հանելով, ինծի
կիւվէնմիշ ըլլալով • մեղայ
մեղայ • ասկից ետև քեզի

կը յանձնեմ իս ալ, ընտա-
նիքս ալ, ճանչուորները
և անճանաչները, ու բո-
լոր աշխարքը։ Դուն կա-
ռավարէ զամէնքս քու
անբաւ իմաստութ̅բ, և հայ-
րական գթութ̅դ և ողոր-
մութ̅բ։ Ողորմէ՛ մեռածին ու
պզտըկին, աղքատին ու
հարուստին. հիւանդներուն
առողջութիւն պարգևէ՛,
խեղճերուն մխիթարու̅ն,
ճամբորդներուն ալ սէլա-
մէթ, ամէնուն գործքին
յաջողու̅ն 'ի փառս քո և
յօգուտ իրենց հոգւոյն։
Տղաքները շնորհքիդ մէջ

աճին, կոպիճները ու ճա-
հիճները առանց մեղաց
ապրին. ամէն քրիստոնէ
համբերուբ̃, ա̃ծսիրութբ̃,
եղբայրսիրութբ̃ կեանքեր-
նին անցնեն, որ արքայու-
թե̃ արժանի ըլլան: Մեր
ննջեցելոց թողուի̃ և ա-
զատուի̃ շնորհէ́, որ ժամ
մի առաջ արժանի ըլլան. քո
սուրբ տեսուե̃դ: Մեղա-
ւորներուն ալ, անհաւատ-
ներուն, մոլորածներուն
դա՛րձ տուր, լոյս տուր,
շնո՛րհք տուր, որ արժանի
ըլլան քու ողորմուե̃դ.
ամէն:

խոստովանանք պատրաստութե :

Տր իմ և ած իմ, որ հայր մեր սիրելի, որ դատաւոր մեր ահաւոր, որ իշխանդ մեր ամենափառաւոր, տէր թագաւոր մեր երկնաւոր, որ փըրկիչ մեր ամենեցուն : Ահա քննեցի իմ կողմանէս իմ խղճմտանքս . և այնչափ մեղք փոքր եկան անցած խոստովանանքէն ինչուան հիմա . կամաչեմ իմ ապերախտութենս, կուլամ

կողբամ որ իմ անձուն սիրելիս այսչափ սրդողցուցի, և քու սիրուդ համար կրցաւիմ կըզղջամ 'ի բոլոր սրտէ, ու կառաջադրեմ ասկից ետև զգուշ կենալ ամենէն կերպով, ու հեռանալ յամէն որոգայթից մեղաց: Եւ ինչպէս որ չար սատանայի հետևելով չամաչեցի մեղք գործելու ատեն, ասանկ ալ հիմա քու հրամանիդ հետևելով առանց խայնելու համարձակ իս ամբաստանել կուզեմ քահանային առջև, որ քու տեղդ է:

Ուսայի տո՛ւր ինձ պարզ
մտքով, յստակ ձայնով,
ու խոնարհ սրտով խոստո-
վանիլ ամէ՛ն գիտցածս,
որ ամէնուն Թողուն առ-
նեմ քու ողորմութեդ, և
կարենամ հետդ հաշտուիլ
ու անուշ սէրդ վայլել· և
քո շնորքովդ իս պահէ՛
հիմակուց էտև ամէն մեղ-
քէ, և առաջնորդէ՛ 'ի բա-
րեգործուե̃ն, 'ի փառս քո՝
և 'ի փրկութե̃ն հոգւոյս·
ամէն:

Յամենայն ժամ աղա-
չանք իմ այս են, 'ի մե-
ղաց իմոց տուրք արա՛ զիս

տ՟ր, և յօտարէն պահեա՛ զծառայս քո մարդասէր տէր ։

## Հաղորդութե՟ն պատրաստութե՟ն ։

Ո՞վ եմ ես տ՟ր, և ո՞վ ես դու տ՟ր. որ կուզես գալ իմ սիրտս հանգչիլ. տ՟ր չեմ բաւական, եթէ ՚ի սիրտ իմ մտանիցես. այլ ասա՛ բանիւ, և բժշկեսցի հոգի իմ ։ Բայց դու ողորմած և ամենողորմ, ըսիր, թէ ո՛չ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց. հիմա աւ կըսես ինծի, Ահա

ւասիկ ողջացար խոստովանանքով, երթ, այսուհետեւ մի՛ մեղանչեր. տես որ կրկին՝ ես քեզ բժշկեցի, սրբեցի մաքրեցի, որ գամ հանգչիլ սրտիդ մէջ իբրեւ 'ի վերնատուն սրտին զարդարեալ, ու հոն տեղը քեզի հետ մէկ սեղան նստիլ, ու քեզ կերակրել հոգեւորապէս անմահական իմ սեղանէս պատուական մարմնով եւ արեամբս. որ ասկէ ետեւ ոչ հիւանդանաս հոգւով, եւ ոչ մեռնիս։ Ո՛վ անբաւ ողորմութիւն քո Տէր. ահաւասիկ կամ

ծառայ քո (կամ աղախին քո), եղիցի ինձ ըստ բանի քում։ Ես անարժանս կը-փափաքիմ սրտով քեզ ըն-դունիլ, դուն ալ մեր սրտովն ընդունէ․ միա-ցո՛ւր զիմ սիրտս քու սըր-տիդ հետ, որ յաւիտեան քեզմէ չբաժնուիմ։

Զծնեալն ՚ի մէջ կու-սէն ընկալցո՛ւք ՚ի սիրտս մեր հաւատով, ոչ երբեմն ՚ի գիրկսն սիմէոն ։ Մաք-րեա՛ զմիտս և զխորհուրդս, զի և մեք հաղորդեսցուք սրբուք ընդ սրբոց քոց ա-ռաքելոց այսօր ՚ի սուրբ

վերնատունն · աղաչեմք
փրկիչ ողորմեա՛ : Յաս֊
տուածային կայծակունն
'ի սրովբէից անհպելին ան֊
մարմնականս մերձեցաք՝ զու֊
պարտական քում խոր֊
հրդոյն · շնորհեա՛ զնոյն
մաքրութ՟ 'ի թողութի մեղաց
մերոց : Որ վառեցար 'ի
հոգւոյն , և ոչ կիզար ըստ
մարմնւոյն , այլ եռուր ըզ֊
հացն կենաց կերակուր
բանաւորաց · բարեխօսեա՛
առ քս̃ ջնջել զգիր մեղաց
մերոց :

## Գոհութիւն հաղորդութենէն ետեւ :

Գոհանամ զքեն, շնորհակալ եմ քեզ Տէր իմ, չեմ կրնար արժանաւորապէս բաւական գոհութիւն քեզ մատուցանել, որ եկար իմ աղքատ հոգիիս տունը, ու աս անպիտան սրտիս մէջ բնակիլ ուզեցիր : Թէ որ երկրաւոր Թագաւոր մը իմ տունս գար նէ, աշխարք իմն կըլլար ուրախութեան, ու ամէն բարիք անկից կըյուսայի . հապա

դուն երկնաւոր Թագա-
ւոր՝ որ իմ սիրտս եկար
նէ, ինչ մենծ փառք պա-
տիւ է ինծի, և անտարա-
կոյս յոյս փրկութն հոգ-
ւոյս: Ինչպէս որ զաքէո-
սի ըսիր, այսօր եղև փըր-
կութն տանս այսմիկ, ինծ
ալ զնոյն ըսէ և կատարէ
քաղցր և բարերար փրկիչ
իմ յս: Այ քու անբաւ
մարդասիրութեդ է՝ սէր ա-
նուան յս, որ չէ թէ միայն
ինծի համար խաչի վրայ
մեռնիս հոգիս խալըսելու
համար, հապա դաս միա-
նաս ալ ինծի հետ սուրբ

հաղորդութ: Ուրիշ փո-
խարէն չունիմ քեզ ընծ-
ըեք ա̃ծ իմ, սէր իմ, ա̃ծ
սրտի իմոյ, միայն բոլո
սիրտս քեզ կընուիրեմ
ու կըփափաքիմ ու կը-
պաղատիմ որ ինծմէ յա-
ւիտեան չբաժնուիս, որ ե
ալ քեզմէ չբաժնուիմ յա-
ւիտեան: Այսր համա
կրկին կրկին շնորհք կխն
դրեմ, որ աս քու ինծ
ըրած շնորհքդ ճանչնա
խըյմէթդ գիտնամ, մէյ
մալ քեզ իմ մեղքովս չը
դառնացնեմ. աշխարք ո
մարմինս ատեմ, քեզ սի

րեմ · սատանայի՛ն խզմէթ չըրնեմ, քեզ միայն ծառայեմ · զի ես ծառայ քո եմ, և որդի աղախնոյ և մօր քո ամենասրբուհի աստուածածնի · ա̃մ մտածմունքս՝ խօսքս և գործքս ՚ի փառս քո ըլլան · և արժանի ըլլամ գալ փառաւորել զքեզ ընդ հօր և ամենասուրբ հոգւոյն յաւիտեանս յաւիտենից · ամէն :

# ՍՐՏԱՆՑ ՀԱՌԱՉԱՆՔՆԵՐ

( աղօթքի ատեն , ու աղօթքէ դուրս : )

Ո՛ւՍՈ՛ ինձ առնել ըզկամս քո , զի դու ես ա̃ծ իմ :

Զճանապարհս քո տ̃ր ցոյց ինձ , և զշաւիղս քո ուսո՛ ինձ :

Լոյս տուր տ̃ր աչաց իմոց , զի մի՛ երբէք ննջեցից ՚ի մահ :

Տ՟ր լոյս իմ և կեանք իմ, որ ապաւէն կենաց իմոց :

Օգնական իմ լեր որ-մի անարգեր զիս, և մի Թողուր զիս ա՟ծ փրկիչ իմ :

Պատրաստ է սիրտ իմ առ քեզ ա՟ծ, պատրաստ է սիրտ իմ :

Գտի զոր սիրեաց անձն իմ. կալայ զքեզ, և ոչ Թո-ղից : Մի Թողուր զիս Թո-ղուլ զքեզ :

Ա՟ծ իմ, և ա՟մ ինչ-դու իմ ես բոլորովին, և ես քո եմ ամենևին :

Տո՛ւր զոր հրամայես. և հրամայեա՛ զոր կամիս:

Դու ես Տ͞ր մեր, դու ես Ք͞ս փրկիչ մեր. զքեզ օրհնեն անձինք մեր: Մարդասէ՛ր Տ͞ր վասն սրբուհւոյ անարատ մօր քո և կուսի, և վասն խաչի քո պատուականի ընկա՛լ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ:

Խաղաղութե՟ց տուօղ Ք͞ս, զխաղաղութի՟ն և զողորմութի՟ն քո պարգևեա՛ մեզ:

Յոյս կենդանութե՟, յոյս և ապաւէն փրկութե՟ Տ͞ր Յ͞ս, փրկեա՛ և փարատեցո՛ զցաւս անձին իմոյ:

Լո՛ւր մեզ տ̅ր՝ լո՛ւր մեզ ա̅ծային ողորմութ̅բ, և գթութ̅բ քով խնայեա՛ յանձինս մեր։

Փա՛ռք քեզ տ̅ր, փառք քեզ, յաղագս ամենայնի տ̅ր փառք քեզ։

Հառաչանօք կարդամ՝ առ քեզ,

Գառն ա̅յ յ̅ս իմ՝ հեզ·

Ըզքո լինձ վարս նիւ-թեա՛ բեհեզ,

Ըզքո ս̅բ վէրս տո՛ւր ինձ 'ի լեզ։

Գոչեմ՝ առ քեզ տիրա-ծին կոյս,

Ցես յուի միակ իմ՝ յոյս·

Խաւարելոյս եօթնա-
ջահ լոյս ,

Քու փրկեցայց անտա-
րակոյս :

Ա՛ռ զաւանդ մաղթա-
նացս , և տուր զողորմուն
քո շնորհացդ : Մեղօք մե-
ռելոյս անախտ կեանք ,
կործանելոյս պարտեօք
փրկուն :

Շնորհեա ինձ լոյս քա-
ւութե՝ կեանք և ապաւէն.
և 'ի տուր շնչոյս թշուա-
ռի՝ աւից զոգիդ քո բա-
րի :

Ահա դու կեանք , դու
փրկուն , դու բժշկութն ,

դու անմահուն, դու երանուն, դու լուսաւորուն ։

Մի՛ ունայնասցի վաստակն աշխատութեան փրկականդ կրից մարդացելոյդ վասն իմ ոչ ։ Մի՛ սուտ եղիցի քրտանցն կաթուած խառնեցեալ արեամբ 'ի մատնութեան աւուր գիշերին ։ Մի՛ անշահ եղիցին կրիցդ պտուղք, զոր կարօտուես խնամ մատուցեր ։

Դու լոյս ես և յոյս, և ես խաւար և յիմար. դու խնկուէ բարի գովելի, և ես համայնիւն չար ատելիկար ։

Երանու՟ն անձկալի, յոր զկենդանու՟ն ընչոյս լքա-նելն է ախորժելի, զի ըզ-քեզ գտից կենդանի :

Փառաւորեա՛ զորդիդ քո 'ի քեզ՝ ա՟ծօրէն ինձ հրաշագործել քաւութ՟ն և ողորմութիւն՝ աղախին ա՟յ և մայր · բարձրացի՛ պատիւ քո ինև, և ցուց-ցի՛ փրկու՟ն իմ քև :

Ահա կաթիլ մի կա-թին քումդ կուսութեան յանձն իմ անձրևեալ՝ կե-նաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյ ա՟ն յո՟ի, արար-չին երկնի և բնաւին երկրի :

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

առ ցաւագին

Մայր խաչելոյն։

ԿԱՑԻ առ խաչին՝ մայր
ցաւագին,
Արտօսրալից 'ի սուգ
ներքին.
'ի տես որդւոյ իւր միած-
նին։
Ընդ անցանէր ընդ անձ
նորին,
Նախագուշակ սուր երկ-
սայրին,

Թափանց 'ի սիրտ խոց
անհնարին ։
Ո՛վ տեսարան ողորմագին,
Ուր տագնապէր մա֊
քուր հոգին,
Ամենօրհնեալ ածած֊
նին ։
Վիշտք աղետից՝ ուխք
ահագին,
'Ի սիրտ ամբիծ ծովա֊
նային,
'Ի տես ցաւոց նր միած֊
նին ։
Ո՞րք երբէք ժուժէր յան֊
ձին,
Ոչ արտասուել յողք
դառնագին,

Յանչափ ցաւոյ մօրըն
փրկչին ։
Ո՞ հանդուրժեր առ ցաւ
սրտին ,
Ոչ կարեկցիլ ծնողի քա-
նին ,
Ցաւակցելըն իւր միած-
նին ։
Այն որ ետես զմ̃ծ որդին,
Մատնեալ առ մեղս
մարդկան ազին ,
Այր 'ի հարուածս՝ ըս-
պանդ գառին ։
Ետես զենեալ զիւր սի-
րելին ,
Հանդէպ աչաց 'ի փայտ
խաչին ,

Եւ մահացեալ ըզկեն-
դանին ։
Սիրոյ աղբիւր կոյս ցաւա-
գին ,
'Ի քոյ ցաւոց հա՛ն ինձ
բաժին ։
Տո՛ւր ինձ ընդ քեզ լալ
առ խաչին ։
Վառեա՛ զիմ սիրտ 'ի սէր
փրկչին ,
Վ՟ իմ մեռեալ անմահ
բանին .
Հաճոյ լինել քեզ և
Նմին ։
Աղէ՛ արա՛ մայր տիրածին,
Զի 'ի սիրտ իմ բևե-
ռեսցին ,

Խաչեցելոյն վէրք հնգե-
քին ։
Մասնաւորեա՛ ինձ ըստ
մասին,
Զանչափ տանջանս քո
միածնին,
Մահացելոյն սիրով մտ̃ իմ։
Տո՛ւր ինձ ընդ քեզ լալ
ողբագին,
Ցաւակցութեամբ իմոյ
փրկչին,
Ցորչափ իցէ շունչս 'ի
մարմին ։
Ուխտիւք խնդրեմ ես լա-
լագին,
Կալ ընդ կուսիդ մերձ
առ խաչին,

Հաղորդ լինել ցաւոց
քոյին ։
Կո՛յս կուսանաց՝ ա͞ծածին,
Դուռն արտասուքդ ինձ
քաղցրացին ,
Թէ զիս կցորդ առնես
նոցին ։
Տո՛ւր ինձ կրել ըզմահ
փրկչին ,
Խաչակցութ͞ե քո միած-
նին ,
Յիշատակաւ վիրացնո-
րին ։
Առ իս հասցեն վէրք ան-
մեղին ,
Եւ արբեցայց սիրով
խաչին ,

Վ՟ն սիրոյ ՚ոք միածնին ։
Հուր բորբոքեալ՝ սէր կեն-
սատուին ,
Յիս վառեցի ձեռամբ
քոյին ,
Զի քո զերծայց յօրն
ահագին ։
Զէն ինձ զգեցո՛ զնշան
խաչին ,
Եւ ամրացո՛ մահուամբ
փրկչին ,
Միշտ ոգեպահ շնորհք
նորին ։
՚ի մերկանալ հոգւոյս
զմարմին ,
Քեւ ըզգեցցի զփառս
երկնային ,

Preussische Staatsbibliothek Berlin

Յանձառու 'ի փառս՝ 'ի փառս փրկչին ։

## Աղօթք ընդ Հարդարանի ։

Ո՛ղջ լեր թագուհի, մայր ողորմութե, կեանք, քաղցրութի, և յոյս մեր, ողջ լեր ։ Առ քեզ կարդամք վտարանդեալ որդիքս եւայի ։ Առ քեզ հառաչեմք միշտ հեծութ և լալագին 'ի հովտէ աստի տրտմութե և արտասուաց ։ Եւ արդ ապա՛ ով բարեխօս մեր դարձո՛ առ մեզ զգորովագութ հայե-

ցուածս աչաց քոց. և զյս̃ զօրհնեալ պտուղ որովայնի քո յետ աստանօր պանդխտութենս ցոյց մեզ, ով բարեբարոյ՝ ով գթած, ով քաղցր և անոյշ կոյս մարիամ: Լե՛ր բարեխօս վասն մեր սուրբ ա̃ծածին, որպէս զի արժանաւորք եղիցուք խոստմանցն քրիստոսի:

Ընդ հովանեաւ պաշտպանութե՛ քո ապաւինիմք սուրբ ա̃ծածին, մի՛ անտես առներ զաղաչանս մեր 'ի կարիս մեր, այլ յամենայն վտանգէ ապրե.

ցո՛ զմեզ մշտակայս փառա-
ւորեալ և օրհնեալ:

Ո՛վ տիրուհի մեր, ո՛վ միջնորդ մեր, ո՛վ բարեխօս մեր, ընդ որդւոյ քում հաշտ արա զմեզ, որդւոյ քում յանձն արա զմեզ, և տարեալ կացո՛ զմեզ յանդիման որդւոյ քո:

—

# ՄԱՂԹԱՆՔ
# ԼՈՐԵՏԵԱՆ

որ 'ի սուրբ
տան կուսին 'ի Նաւզարէթ ։

---

Տէ՛ր ողորմեա՛·
Ք͞ս ողորմեա՛ ։
Տ͞ր ողորմեա՛·
Ք͞ս լո՛ւր մեզ ։
Ք͞ս ունկնդի՛ր լեր մեզ ։
Հա՛յր երկնաւոր Ա͞ծ· ողոր-
մեա՛ մեզ ։
Որդի փրկիչ աշխարհի Ա͞ծ·
ողորմեա՛ մեզ ։

Հոգիդ սբ̃ ա̃ծ. ողորմեա՛ մեզ:

Սբ̃ Երրորդութի̃ն մի ա̃ծ. ողորմեա՛ մեզ:

Սրբուհի՛ Մարիամ. աղաչեա՛ վս̃ մեր:

Սբ̃ ա̃ծածին. աղաչ:

Սբ̃ կոյս կուսանաց. աղ:

Մայր քի̃ի. աղ:

Մայր ա̃ծային շնորհաց. աղ:

Մայր մաքրուե̃. աղ:

Մայր զգաստուե̃. աղ:

Մայր անարատ. աղ:

Մայր ամբիծ. աղ:

Մայր սիրելի. աղ:

Մայր սքանչելի. աղ:

Մայր արարչին. աղ:

Մայր փրկչին · աղ։
Կոյս իմաստուն · աղ։
Կոյս գերյարգոյ · աղ։
Կոյս գերահռչակ · աղ։
Կոյս կարող · աղ։
Կոյս բարեգութ · աղ։
Կոյս հաւատարիմ · աղ։
Հայելի արդարութեան · աղ։
Աթոռ իմաստութեան · աղ։
Պատճառ մերոյ խնդու-
թեան · աղ։
Անօթ հոգևորական · աղ։
Անօթ պատուական · աղ։
Անօթ չքնաղ՝ եռան-
դեան · աղ։
Վարդ խորհրդական · աղ։
Աշտարակ դաւթեան · աղ։

Աշտարակ փղոսկրեայ. աղ:
Տուն ոսկեղէն. աղ:
Տապանակ ուխտի. աղ:
Դուռն երկնից. աղ:
Աստղ առաւօտեան. աղ:
Բժշկութին հիւան֊
դաց. աղ:
Ապաստան մեղաւո֊
րաց. աղ:
Մխիթար վշտացե֊
լոց. աղ:
Օգնական քրիստո֊
նէից. աղ:
Թագուհի հրեշտա֊
կաց. աղ:
Թագուհի նահապե֊
տաց. աղ:

Թագուհի մարգա-
րէից ·  աղ:
Թագուհի առաքե-
լոց ·  աղ:
Թագուհի մարտիրո-
սաց ·  աղ:
Թագուհի վարդա-
պետաց ·  աղ:
Թագուհի կուսա-
նաց ·  աղ:
Թագուհի ա̃մ՛ սր̃ց ·  աղ:
Գառն ա̃յ, որ բառնաս
զմեղս աշխարհի ·
խնայեա՛ 'ի մեզ տ̃ր:
Գառն ա̃յ, որ բառնաս
զմեղս աշխարհի ·
Լո՛ւր մեզ տ̃ր:

Գառն ա՟յ, որ բառնաս ըզ
մեղս աշխարհի.
Ողորմեա՛ մեզ:
Ք՟ս լո՛ւր մեզ:
Ք՟ս ունկնդիր լեր մեզ:

Անճառելիդ ա՟ծ ողորմութե՟, որ յանձն առեր ոչ միայն մարդանալ, այլ և որդի մարդոյ լինել. և ծննդեամբ 'ի սուրբ կուսէ՝ մայր քեզ ունել կամեցար, որ զա՟ծ ունէիր հայր յերկինս: Տո՛ւր մեզ աղերսեմք՝ զտիրամօրդ յիշատակ սըրտի մտօք քարոզել, զա՟ծամայրութե՟ նորա գերազանց մեծարանօք պատուասի-

րել. Նորին գերահրաշ մե-
ծութե՟ խոնարհութե՟ զմեզ
ներքոյ արկանել. որ զքեզ
հոգւով սբ՟վ յղացաւ, ըզ-
քեզ կուսութե՟ ծնաւ, և
զքեզ յերկրի հպատակօ-
րէն հնազանդ զաւակ ու-
նել արժանի եղև՝ զտ՟րդ
մեր յս՟ քս՟. որ կենդանի
Թագաւորդ ես ընդ հօր և
ընդ սբ՟ հոգւոյն յաւի-
տեանս. ամէն։

### Առաւօտը, կէսօրը, երե-կոյը։

Հրեշտակ տն՟ աւետեաց
կուսին մարիամու, և յղա-

*ցաւ 'ի հոգւոյն սրբոյ*

*Ողջոյն քեզ*

*Ահաւասիկ կամ աղա-*
*խին տն, եղիցի ինձ ըս*
*բանի քում:* *Ողջոյն*

*Եւ բանն մարմին եղև*
*և բնակեաց 'ի մեզ:*

*Ողջոյն*

*Զշնորհս քո, աղաչեմք*
*զքեզ տր, հեղ 'ի հոգիս*
*մեր. զի որ աւետեօք հրեշ-*
*տակին խորհրդազգածք ե-*
*ղաք մարդեղութեան քնի որդ-*
*ւոյ քո, չարչարանօք նո-*
*րին և խաչիւ առաջնոր-*
*դեալ հասցուք 'ի փառս*
*յարութեան. ամէն:*

Տղայոց աղաչանք առ սուրբ կոյսն ։

Տիրամայր ա̃ծածին, որ ծնար իմ յս̃ փրկիչս, կաղաչեմ յիշէ քու քաղցր մայրութեդ, ու իմ քաղցրիկ յս̃ի մանկութեը, որ ինծի համար ինծի պէս տղայ եղաւ, ու քու մայրական աննդեամբդ քու սուրբ ձեռքդ մեծցաւ, որ զիս ալ շնորհքով մեծցնէ ։ Դուն խնդրէ յս̃էս, որ իր շնորհքը իմ վրայէս պակաս չընէ․ ինծի խելք ու միտք տայ, սուրբ և

պարկեշտ և անարատ պա-
հէ, որ սուրբ յովհաննէս
աւետարանչին պէս իրեն
սիրելի աշկերտ ըլլամ, քեզ
ալ արժանաւոր որդեգիր:
Ես քեզ կըճանչնամ ին-
ծի սիրական մայր գթած,
դուն ալ իս ճանչցիր ինչ-
պէս սիրուն զաւակ մը՝
ինչպէս եղբայր յո̃հի· որ
է միանգամայն իմ տ̃րս
և թագաւորս· և դու ամ-
րուհի իմ և թագուհի,
կոյս փառաւորեալ փառօք
'ի փառս միածնիդ յա-
ւիտեանս, ամէն:

## ՄԱՍՆԱՒՈՐ ԱՂՕԹՔ

Փրկութ̃ հաւանելու:

---

ԱՍՏՈՒԱԾ իմ հաւատամ 'ի քեզ, իմ հաւատքս զօրացո՛ւ: Յուսամ 'ի քեզ, յոյս ապահովցո՛ւր: Սիրեմ զքեզ, սէրս եւելցո՛ւր,

Կզղջամ մեղքերուս վրայ, զղջումն շատցո՛ւր:

Քեզ կպաշտեմ, որ իմ առջի սկիզբս ես. քեզ կը-

փափաքիմ, որ իմ վերջին վախճանն ես. շնորհակալ եմ քեզմէ, որ միշտ իմ բարերարս ես. քեզ կըկանչեմ, որ իմ մէկ հատիկ պաշտպանս ես:

Տ̄ր իմ և ա̄ծ իմ, քու իմաստութ̄դ իս կառավարէ՛. քու արդարութ̄դ իս վախցո՛ւր. ողորմութ̄դ իս մխիթարէ՛, կարողութ̄դ իս պահպանէ՛:

Քեզ կը՛նուիրեմ իմ միտքս, խօսքս, գործքս, ու քաշածս. որ ասկից ետև քեզ միայն մտմտամ, քու վրադ միայն խօսիմ,

քու կամացդ կեօրէ միայն գործեմ, ու քեզի համար միայն քաշեմ։

Այն բանը կուզեմ Տ̃ր, ինչ որ դուն կուզես. քու կամքդ կուզեմ, ինչպէս որ կուզես, որչափ որ կու-զես։

Կաղաչեմ Տ̃ր, միտքս լուսաւորէ՛, կամքս վա-ռէ՛, մարմինս մաքուր պա-հէ՛, հոգիս սրբէ՛։

Դուն ինծ օգնէ՛ ա̃ծ իմ, որ կարենամ անցած մեղքերս քաւել, գալու փորձութիւններուն յաղթել. վատթար բնութիւնս ոտքի

տակ առնել, և ինծի ըն-կած առաքինութիւնները կա-տարել։

Սիրտս լեցո՛ւր սիրով քու ինծի ըրած բարիք-ներուդ համար. ատելու-թենովս իմ մեղքերուս դէմ. աղէկ սրտով ու ջան-քով իմ եղբօրս համար, ու բանի տեղ չսեպելով աշխարքիս ամէն բանը։

Մի՛տքս խօթէ ու յոր-դորէ՛, որ միշտ իմ մեն-ծերուս հնազանդիմ, իմ տակս եղողներուն հետ սիրովվարուիմ, բարեկամ-ներուս հաւատարիմ ըլ-

լամ, թշնամիներուս սըր-տանց ներեմ:

Օգնէ՛ ինծի Տէր, որ մար-մինս ճնշելով հեշտասի-րութիւնը կոխեմ, ողորմութիւն ընելով ագահութիւնը կոխ-կըրտեմ. հեզ ըլլալով բար-կութիւնը յաղթեմ, ջերմե-ռանդ ըլլալով գաղջութիւնը հեռացնեմ:

Տուր ինծի Տէր իմ, որ խոհեմ ըլլամ իմ գործքե-րուս մէջ, սրտիս փոր-ձանքներուն մէջ. ձախոր-դութեան ատենը համբերող, յաջողութեան ատենը խո-նարհ:

Մի՛ թողուր որ մոռ-նամ խելքս գլուխս ա-ղօթք ընել, ուտելու խը-մելու չափը պահել, զգու-շաւոր ըլլալ ամէն բանին մէջ, ու հաստատուն մնալ բարի մտքի վրայ:

Ի՛ս շարժէ որ ճշմա-րիտ փոյթ ունենամ խղճ-մտանքս միշտ մաքուր պահելու, ամէն շարժ-մունքիս մէջ պարկեշտ ըլ-լալու, ամէնուն բարի օրինակ տալու, ու առա-քինի վարքով կենալու:

Քեզմով ջանք ունենամ ամէն իժիր բնուես յաղ-

թելու, շնորհքիդ գործակցըլլալու, օրէնքներդ պահելու, ու յաւիտենական փրկութեն արժանի ըլլալու ։

Շնորհէ՛ ինծ տէր, որ ճանչնամ՝ երկրիս պզտըկունը, երկնքին մենծութնը, ատենին կարճունը, յաւիտենականութեն անվախճան տեւողունը ։

Տր ած իմ տուր ինծի՝ իս մահուան սպատրաստել, քու դատաստանէդ վախնալ, դժոխքէն հեռանալ, և արքայութենդ ժառանգել շնորհօք և ողորմութե

քու անբաւ մարդասիրութեդ. ամէն:

## Օրհնութիւն կուսին Մարիամու:

Մեծացուսցէ անձն իմ զտէր. և ցնծասցէ հոգի իմ ած փրկչաւ իմով:

Այց արար 'ի վերայ խոնարհութե աղախնոյ իւրոյ. այսուհետև երանեսցեն ինձ ամենայն ազգք:

Արար ընդ իս մեծամեծս հզօրն. և սբ է անուն նորա:

Ողորմութի արար ազ-

գայ յազգս երկիւղածաց իւրոց • և արար զզօրու̃ն բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից • և քակեաց զհզօրս յաթոռոց։

Զխոնարհս բարձրացոյց • զկարօտս ելից բարութ̃բ, և զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ, յիշելով զողորմութին իւր։

Որպէս խօսեցաւ առ հարս մեր, ընդ Աբրահամու՝ և զաւակի նորա յաւիտեան։

# ՄՏԱԾԱԿԱՆԻՆ

## հարկաւորութիւնը։

---

Աղօթքին աղէկը ու ամենէն հարկաւորը Մտածականն է․ ուստի ամէն օր նայէ որ մէկ քառորդի չափ ամէն հոգըդ Թողուս, ու առանձինն մտմտաս՝ ինչ որ Բարի խորհուրդներ ըսած գրքուկին մէջ, կամ խոկ-

մունքին մէջը գրած է
նէ. որով կարենաս քու
պարտքդ ճանչնալ, խեղճ-
մտանքդ քննել ու մաք-
րել, և աստուծոյ վախովը
ու սիրովը ճշմարիտ ա͞ծա-
պաշտ ըլլալ, և անտարա-
կոյս փրկու͞ն հասնիլ աս-
տուծով: Աս վախճանի
համար գրած են կամ գրած
են ամմէն աղօթքներ, և
մանաւանդ մտածական ա-
ղօթքը:

ՎԵՐՋ

Z



Z. 819/819



Z

10/13.

K.14.6.27